

իր պատասխանատուութեան չափաւոր գիտակցութիւնը: Ինչու եմ խօսում ամբողջ Եւրոպայից, երբ բաւական է միայն մի պետութիւն ձայն բարձրացնել պատեհ վայրկեանում՝ որ բոլորին էլ դնի միջամտելու պարտականութեան մէջ, եթէ միայն կ'զգացուի նրանց կարիքը: Ես անկեղծաբար ցանկանում եմ, որ այս ծանր հոգսը մեզանից վերանայ: Բայց թիւրքերը սովորեցրել են մեզ դէմ էլնել այնքան անտկնկալ պատահմունքներին, որ ես դժուարանում եմ յուսալ, թէ նոր բէթիմը պիտի կարողանայ վերականգնուել առանց Բ. Դրան, ինչպէս և երաշխաւորող պետութիւնների նախնաձախնդրութիւնը շարժելու: Մարդասիրական զգացմունքից դուրս, որ պիտի ոգևորի ամենքին, եւրոպական շահը պահանջում է, որ լաղաղութիւն տիրի Ասիայում Սուլթանի բոլոր հպատակներին համար՝ ոչ թէ այն լաղաղութիւնը, որ առաջ է գալիս ջարդի ապշանքի լուրերից, այլ արդարութեան լաղաղութիւնը, եթէ միայն կարելի է հասկանալ արդարութիւն առանց ազատութեան:

Ժ. Կիւմանսո*)

Հայկական բարենորոգումներ և բաժանման բաղաձայնութիւն.

Փարիզ, 15 փետրուարի,

Ուղիղութ օր է, կիւրակի փետրուարի 8-ին**), որ Հայկական բարենորոգումների վերաբերեալ համաձայնութիւնը ստորագրուեց Կ. Պօլսում տաճկական կառավարութեան և Ռուսաստանի ներկայացուցչի ձեռքով: Հայաստանը պիտի բաժանուի երկու հատուածների, որոնցից առաջինն մէջ կ'մտնեն Սյազի, Էրզնուրտի և Տրապիզոնի վիլայեթները, իսկ երկրորդն մէջ՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դարբենդի վիլայեթները: Իւրաքանչիւրի հատուածի մէջ պիտի զբուլ եւրոպական մի Ընդհանուր Վերատեսուչ ընտրուած ու է փոքրիկ պետութեան

*) Ժ. Կիւմանսոն նախկին նախարար Ֆրանսիայի և յայտնի հասարակական գործիչ է և իշանաւոր հուետար, որի համար և նորա կարեւոր յօգուածն ֆրանսերէն «L'homme Libre» Թերթից (15 փետրվ. ն. տ.) Թարգմանարար բերում ենք: Խմբ.

**) Ըստ մեր տոմարի յունուարի 26-ին Ժ. խմբ.

մեջից և պիտի ունենայ վարչական, արդարադատութեան, ոստիկանական կոնսորի ու պաշտօնանկ անելու իրաւունք եւր շրջանի պաշտօնեաների նկատմամբ: Ես չեմ մանոււմ ընդհանուր խորհուրդների և վիլայէթների կօմիտէների (որտեղ մի մասը յատկացուած է քրիստոնէաներին) իրաւասութիւններին վերաբերեալ մանրամասնութեանց, ինչպէս և բուէարկութիւններին և լեզուների օրէնքների քննադատութեանց մէջ: Սրանք բոլորն էլ երկրորդական են:

Այս բարենորոգումների ծրագրի մէջ միայն մի բան կայ էական՝ եւրոպական Ընդհանուր Վերաւեստուչներին տրուած իշխանութիւնն է այդ: Եթէ այդ իշխանութիւնը, որ ըստ տեսականի մեծ է, գործադրուի գիտակցօրէն, հետևողական ոգով և եռանդով, Հայերը արդիւնաւոր և ուժգնօրէն պաշտպանուած պիտի լինեն ընդդէմ այն ի չար գործադրումների, որոնցից տանջուած են այսօրան երկար ժամանակ: Մարդկանց ընտրութիւնը, որոնք պիտի ունենան մեծ պատիւ և ծանր լուծ՝ բարենորոգումների գործադրումն ապահովելու համար, ամենաառաջնակարգ անհրաժեշտութիւնն է ներկայացնում: Ուրեմն պիտի յուսաւ, որ այդ ընտրութիւնը լաւ պիտի կատարուի և բնաւորութեան տէր մարդիկ, որոնց համար կաբեւի է գիմեշ Յվէյցարեային, Բէլգիային կամ Հոլլանդիային, երբէք չեն խուսափի: Այնտեղ մի մեծ մարդասիրական պարագայ կատարելու:

Ձեռնարկած գործի համար օգտակար աշխատողներ մէջ, առաջնակարգ տեղ պիտի տալ Պօղոս Նուբար փառային՝ Հայոց Կաթողիկոսի պատուիրակին. ոչինչ չէր անուի, եթէ չլինէին նրա յարատեւ և անհամար բանակցութիւնները բոլոր եւրօպական պետութիւնների առաջ: Եթէ բարենորոգումների նուազագոյնը, որ նա ձեռք է բերել, ճշդիւ գործադրուի, նամանաւանդ եթէ եւրոպական Ընդհանուր Վերաւեստուչները գիտակցեն իրենց ստանձնելիք անհրաժեշտ պատասխանատւութիւնները, Հայաստանի բազմաթիւ կրօնական փոփոխութիւնները, Ահա թէ ինչու ես ի ներքուստ կատկածում եմ բարենորոգումների վերջնական ճակատագրի և գործնական հետևանքների նկատմամբ, որ կստացուեն նրանց գործադրումից, ես ցանկանում եմ ինքս ինձ համոզել, որ նրանք չեն մնայ իբրև նախագիծ միայն թղթի վրայ, ինչպէս բոլոր նախկինները, և ես չեմ արհամարի հէնց առաջին ձեռք բերուած գոհացումը:

Սակայն պէտք է, որ Հայոց բարեկամները ցնորքներ քաշեն: Որոշուած ծրագրի գործադրումն, հաւանօրէն,

Լհանդիպի մեծ դճուարութիւնները և նորաք չպիտի թուլանան իրենց ջանքերը մէջ այն պատրուակով, որ աշխատանքը իրականացուի Խրօք, Թիւրքիայի շահն է, որ հէնց ինքը յայտարարէ բարենորոգումների անմիջական գործադրումն և նպաստի բոլոր միջոցներով ուղղամիտ ու լրիւ գործադրման, եթէ նա ցանկանում է խուսափել խռովութիւններից և ղինուորական միջամտութիւններից, որոնք կարող են Թիւրքիայի բաժանման նախաքան դառնալ: Բայց երկարամեայ յորձերն ապացուցել են, որ Տաճկաստանը չգիտէ ճանաչել իր իսկական շահը: Ստիպուած լինելով, աստ կամ տասներկու ամիսայ լինճաբանութիւններից և խուսափումներից յետոյ, ստորագրել բարենորոգումների ծրագիրը, շատ հաւանական է, որ նա կը պահպանուի գործադրումների վերաբերեալ դժուարութիւնները և որ նա նորից կդիմի իւր աւանդական հնաբանքին՝ առանձ խոստումների գործադրումն ուշացնելու համար: Սա, առնուազն, ինձ թոււմ է, անցեալ դասերի հետեւեցումն է: Աւելի լաւ, եթէ դա այդպէս չէ: Բայց վստիստաբար գոյն սխալ պիտի լինի չափազանցուած վստահութեամբ օրօրուել:

Մի այլ բան կայ: Հայկական հարցը չի կարող անջատուել ամբողջ Ասիական Տաճկաստանի մեծ խնդրից: Գեղատարար նա լուծուած էր ղիւանաղիտական պայմաններում, որոնք այն չեն ինչ որ պիտի ցանկային, որ լինէր: Կուրօքէն երիտասարդ թիւրքերի քաղաքագէտները և արեւմտեան պետութիւնների թուլութիւնը թոյլ տուին, որ գործը ընդունեց զուտ միջազգային ընդթիւ Բոլոր բանակցութիւնները տարուեցան Ռուսաստանի միջոցով, Գերմանիայի հետ համաձայն: Կատարուած իրողութեան մէջ մի բան կայ խորհրդաւոր՝ որ միայն Կ. Պօլսի Ռուսաստանի ներկայացուցիչն է ղրել իւր ստորագրութիւնը փաստաթղթի մասի: Միւս պետութիւնները դրանից յետոյ կտան միայն մի երկրորդական, աւելորդ ոտորագրութիւն և այն էլ, այսպէս ասած, ձեւի համար: Երկու պետութիւնները, (մէկը առաջնակարգ), հետեւողականութեան ուղիով, յաջողութիւն են ունեցել մի առանձնաշարտուի շահ և իրաւունք ձեռք ձգել Հայաստանի նկատմամբ: Սա կարեւոր է, նամանաւանդ, երբ չեն կարող քողարկուել, աչքերը կապել, որ ասիական Տաճկաստանի տեսական բաժանումն պետութիւնները մէջ, համարեա թէ մի կատարուած գործ է:

Այս վերջին ամիսների և նամանաւանդ, այս վերջին շաբաթների ղիւանաղիտական գործունէութիւնը արտահարգ

էին: Մօտիկ ապագայում օտոմանեան Ասիայի շուրջը տա-
րուած բանակցութիւնները կյանքէն մի շարք համաձայնու-
թիւնների, որոնք շաղկապուած են և տարուած են միեւնոյն
ուղղութեամբ: Անգլո-թիւրքական և անգլո-գերմանական
համաձայնութիւնները մօտաւորապէս իրականացած են: Ֆրանս
— գերմանական պայմաններն ստորագրելու վրայ են: Դրանց
կյաջորդի ֆրանս-տաճկական համաձայնութիւնը: Ինչ վերա-
բերում է ռուս-գերմանական համաձայնութիւններին, նրանք
ամենից շուտ են կատարուել և նրանք են բացել բաժանման
քաղաքականութեան ճանապարհը: Նրանք սղղուենքով կնքուած
էին Պօտզամի տեսակցութիւնից ի վեր (անտարակոյս ստո-
րագրել են մի քանի դադտնի համաձայնութիւններ) և, ան-
կասկած, Բելլինի ու Պետերբուրգի երկու կառավարութիւն-
ներին միում էր միայն որոշել ինչ-ինչ առանձնայատուկ պայ-
մաններ: Այս բոլոր համաձայնութիւնների վախճանը, որոնց
մէջ չի կարելի անտես առնել մի որոշ զուգորդութիւն, կըրոշմի
գիււանաքիտական պատմութեան մէջ մի անհրաժեշտ թուա-
կան և մեծ հասարակութիւնը կյայտնագործի ղրանց հետեանը-
ները միայն մի քանի տարիներից յետոյ:

Այս բոլոր զուգահեռական բանակցութիւնների նպա-
տակն է բաժանել Ասիական Տաճկաստանը լաւ սահմանա-
գծուած բաժանմունքների, որոնցից ամեն մէկը կը յատկացուի
մի պետութեան գործոճնէութեան: Այս առթիւ եղած Ֆրանս-
գերմանական բանակցութիւնները տիպիքական են: Աշխա-
տում են այդ երկու երկրների խճճուածքը բոլորովին բաց
անել այնտեղ, որտեղ նրանք խառնուած դրութեան մէջ են
եղել: Այդ ձևով, Ֆրանսիան ամբողջովին քաշուած է Բաղդադից
և նրա վրայով անցնող գծից: Գերմանիան դրա փոխարէն յատ-
կացնում է Ֆրանսիային լաւ սահմանուած շրջան Սիրեայում:
Անկասկած, Հայաստանում — հիւսիս արեւմտեան կողմում,
Ֆրանսիան ձեռք է բերում նոյնպէս մի երկաթուղու ցանց:
Բայց նա այստեղ, ոչ ոք չի կարող ժխտել, միայն տեղ է բռն-
նելու Ռուսաստանի համար, որը 1900 թուից ձեռք է բերել
մօնօպօլեայ այդ շրջանում երկաթուղու գծեր կառուցանելու
համար, և որը, ներկայումս, ինքը ձեռնհաս չի երկաթուղու
ճանապարհներ ձգել: Անգլիական համաձայնութիւնները, իր
մասի նկատմամբ, նոյն ընոյթն են կրում: Անշուշտ, բոլոր
նրանք, որոնք գործակցում են այս բաժանման գործին, ճշտ
հաշուի չեն առնում վերջին հետեանքները: Սրանք աւելի
պարզ են ամեն մի դիտողի համար, որն աւելի ուշադիր է

իրականութիւնները նկատմամբ, քան այն անօգուտ դիւանադիտական ֆորմուլները, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ վարագոյրի միայն մի երես կամ ճակատը (ֆատադ)։

Ուրեմն դժուար չէ հասկանալ, կամայ թէ ակամայ, որ ասիական օտոմանեան կայսրութեան բաժանման շրջանը ուժգնօրէն կըացուի՝ այս բոլոր համաձայնութիւնները կնքումովը։ Սրանց, հաւանօրէն, կյաջորդի պետութիւնները անդորրութիւնը, որոնք առաջուց պայմանաւորուած լինելով տեսական կտրատման նկատմամբ, այլ ևս իրար կանխելու ոչ մի իրաւունք չեն ունենայ։

Ուրեմն սրանով կարելի է բացատրել, որ ինչ-ինչ պետութիւններ իրենց ամբողջ խնամքը թափում են այն բանի վրայ, որ Հայկական բարենորոգումների հասարակական ապահովութիւնն ու կոնտրոլը աւելի երեւոյթական լինեն, քան թէ իրական։ Ապահովելու հոգացողութիւնը, ինչ տեսակէ էլ դա լինի, նուազագոյն պահանջն է հայերի նկատմամբ և թոյլատրելի չէ արհամարհանքով նորից դուրս նետել բարենորոգումների ներկայ նախագիծը։ Բայց թոյլատրելի է ցաւել, որ այդ նախագիծը կազմուել է թերի և վտանգաւոր պայմաններում, որ ամբողջ գործը օժտուած է պակասութեամբ և որ Եւրոպան հետապնդում է արեւելքում աւելի շուտ զիտաւորեալ քայլայման, քան թէ վերահազմութեան կամ բարւոքման։

P. B.

Genève Թերթից 17 փետր. 1914 թ.

